



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtychyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

**ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ
1960-ԱԿԱՆ ԹԹ.**

Ազգային ինքնության պահպանումն ամենօրյա խնդիր է հայկական Սփյուռքում. մի կողմից պետք է պահպանել հայի տեսակն այլ բարքերով ապրող օտար միջավայրում և համակերպվել սոցիալական մեկուսացմանը, մյուս կողմից՝ մոռանալ ազգայինը, ընդունել նոր մշակույթը և ինտեգրվել հասարակությանը: Երրորդ տարբերակ ևս կարող է լինել. համաձայն Ջեքիյանի՝ կանոններով խաղը [1]: Ի վերջո, էթնիկական այլ հանրությունների հետ շփումն ազգի մտահայեցողության ակունքն է, որի միջոցով մշակութային ավանդույթների, սովորույթների և գաղափարների վերաարժևորում է կատարվում [2]: Տեղի են ունենում ինքնության տատանումներ. ըստ Գ. Պլտյանի՝ ինչը հարազատ է, դառնում է օտար՝ հետո վերստին հարազատ դառնալու համար [3]:

Հարց է ծագում. արդյոք անհրաժեշտ չէ՞ ազգային ընդհանրացված ինքնության փոխարեն տարբերակել Սփյուռքում ապրողի սփյուռքյան ինքնությունը: Այն իր տեսակով հիբրիդ է, քարացած չէ, փոփոխվում և ընդլայնվում է, ներառում նոր արժեքներ, որոնք, սակայն, ինքնությանը համահունչ են ու համալրում են այն: Ըստ Ս. Հուլի՝ ինքնությունը թե՛ նախկինում որոշակի լինելու, և թե՛ հետագայում մեկ ուրիշը դառնալու արդյունք է [4]:

Հայ տեսաբան Խ. Թոլոյանը «սփյուռք» երևույթի մասին խոսելիս առանձնացնում է «multilocal»-ի՝ բազմաթիվ վայրերում ապրելու կամ դրանց հետ կապ ունենալու գաղափարը, երբ սփյուռքի ներկայացուցիչը գիտակցում է, որ ևս մեկ վայր կա, որը կարևոր է, որի հետ ոչ թե ֆիզիկապես, այլ մտովի է կապված [5]:

Վ. Սահակյանի դիտարկմամբ՝ ինքնությունն իրավիճակային է. որոշակի հանգամանքներում մեկն է դրսևորվում, այլ միջավայրում՝ մյուսը [6]: Բերենք օրինակ. Լիբանանն պետության՝ իր քաղաքացիների համար կազմակերպած ցանկացած միջոցառման (լինի ընտրություն, թե ժողով) հայը մասնակցում է որպես լիբանանցի, քանի որ ընդունված որոշումներն անդրադառնալու են իր քաղաքացիական գործունեության վրա: Իսկ Մեծ եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչման միջոցառումների կազմակերպմանը նա մասնակցում է իբրև հայ: Այսպիսով, Սփյուռքում ապրողի կերպարի երկփեղկումն անխուսափելի է դառնում:

Լիբանանի հայ համայնքի օրինակով դիտարկենք ինքնության խնդիրը և դրա արտացոլումը կուսակցական պարբերականներում 1960-ական թվականներին:

1960-ական թվականներին Լիբանանի հայ համայնքը համարվում էր Սփյուռքի կենտրոն, որն ուներ ինքնակազմակերպման հստակ կառույցներ՝ դպրոցից մինչև

կուսակցական ակումբ, որոնք ապագա հոգևորական, ուսուցիչ, բժիշկ ու կուսակցական գործիչ էր պատրաստում մյուս գաղութների համար: Այդուհանդերձ, նույնիսկ Լիբանանում դժվար է խոսել միասնական ինքնության կամ լիբանանահայի ինքնության մասին: Բաժանվածությունը կուսակցական պատկանելության, քրիստոնեության ճյուղերի հետևորդության, դաշնակցական, ռամկավար կամ հնչակյան թաղամասերի, մշակութային, կրթական ու հասարակական հաստատությունների տարբերակումը՝ ըստ քաղաքական կողմնորոշման, մղում է ենթադրելու, որ լիբանանահայի ինքնության պարագայում ևս գործ ունենք հատվածային ինքնությունների հետ: Առաջին շերտին՝ էթնիկ ինքնությանը, կյանքի բոլոր ոլորտներում հաջորդում է քաղաքական-գաղափարական տարաբևեռ կողմնորոշումը, որը պայմանականորեն կարելի է կոչել «կուսակցական» ինքնություն: Ավելացնելով արաբական աշխարհում ամենօրյա կենսագործունեությունը՝ ստացվում է, որ արաբական և հայկական ինքնությունները Լիբանանի հայի մեջ անբաժանելի են:

Դիտարկենք շրթայի հաջորդ օղակը. Լիբանանում հայտնվածի համար ազգային ինքնությունը մեկ բան է, ԱՄՆ-ում հայտնվածի համար՝ մեկ այլ՝ շնորհիվ այն օտարի, որն անպայման առկա է իր մեջ, և օտարի հետ ազգայինի փոխհարաբերության տեսակի: Բացի այդ, ԽՍՀՄ-ում կերտվում էր խորհրդահայի ինքնությունը, որը հետևողականորեն տարածվում էր Սփյուռքում՝ հակակշիռ դառնալով միջավայրի հետ արժեքների փոխանակմանը զուգահեռ ազգային տեսակի պահպանմանը ձգտող սփյուռքյան ինքնությանը: Վերջինի համար առանցքային էր լեզուն, մշակույթը, Հայ դատը, ազգային տեսակը, իսկ «ամեն հայի հայրենիքը Խորհրդային Հայաստանն է» գաղափարը բոլորի դեպքում չէր, որ միանշանակ էր ընկալվում:

Լիբանանահայի ինքնության խմորումները չէին կարող չարտացոլվել տեղի հայկական մամուլում: Սփյուռքահայի՝ տվյալ դեպքում՝ Լիբանանում ապրող հայի ինքնության բազմաշերտության արտահայտումը նույնպես կարելի է տեսնել թերթերի հրապարակումներում: Փոխադարձ առնչությամբ նկատելի են նաև մամուլի ուղղակի կամ անուղղակի ջանքերը՝ ազդելու բազմաշերտ ինքնությունների ձևավորման վրա կամ երանգ հաղորդելու ինքնության մասին պատկերացումներին:

Տարբերակումներից մեկը կատարվում է՝ ելնելով կուսակցական պատկանելությունից կամ գաղափարական կողմնորոշումներից, ինչը հաջորդաբար թելադրում է տարբերակում՝ ըստ տվյալ կուսակցության կրթական, մշակութային, կրոնական, պատանեկան, երիտասարդական, անգամ մարզական կառույցների հաճախելիության: «Ազդակը» Լիբանանի հայ համայնքի կյանքը ներկայացնում է առավելապես ՀՅԴ, «Զարթոնքը»՝ ՌԱԿ, իսկ «Արարատը»՝ Հնչակյան կուսակցության դպրոցի, մարզական ակումբի, կանանց միության և նման կառույցների նախաձեռնությունների միջոցով: Ստացվում է՝ յուրաքանչյուր կուսակցության գաղափարախոսության հետևորդները տարածև արժեքներով կազմավորվող ինքնության կրողներ են: Կուսակցական թերթերն ասես թելադրում են համապատասխան կենսակերպ՝ հրապարակումների օգնությամբ ասելիքը հասցնելով ընթերցողին: Արտացոլելով «կու-

սակցական» ինքնության կրողների իրական կյանքը՝ թերթերն այդպիսով կերտում են ինքնության օրինակելի ձևանմուշ:

Մեկ այլ տարբերակում ծագում է Խորհրդային Հայաստանի ընկալման տարածայնությունից: Հնչակյաններն ու ռամկավարներն իրենց պարբերականներով Խորհրդային Հայաստանը հայրենիք էին համարում, հայության կենտրոն, իսկ Լիբանանի ու Սփյուռքի հայերին՝ այնտեղ կատարվող իրադարձությունների անմիջական հետևող: «Արարատում» ու «Զարթոնքում» խոսվում է անգամ Խորհրդային մարդու ինքնության մասին՝ ընթերցողի ինքնությունը փորձելով նույն հարթության վրա դնել Հայաստանում ապրող սոցիալիզմի գաղափարակրի կամ սոցիալիստական հանրապետությունների քաղաքացու ինքնության հետ՝ չեղարկելով տարածքային անջրպետը [7]: Խորհրդային Հայաստանը ներկայացվում է որպես խաղաղության և ճնշված ազգերի հույսերի մարմնավորում [8], ինչը դարձյալ բոլշևիկյան գաղափարախոսության արգասիք է: Դաշնակցական «Ազդակը», չժխտելով հայրենիքի գոյությունը, այդուհանդերձ, կենտրոնում դնում էր միացյալ, ազատ, անկախ հայ ազգի գաղափարը, Սփյուռքի հայությանն ու վարչակարգով չտարված ազգակիցներին: Թերթը սուր քննադատում է համայնավար գաղափարախոսության հետևորդ սփյուռքահայերին՝ նշելով, որ նրանք նույնպես հրաժարվել են հայրենիքից, հողից, ազգից, պատմությունից. նրանց համար միևնույնն է՝ Արցախը հայկական հող է, թե Խորհրդային, քանի որ պատկանում է «սովետական հայրենիք ընտանիքին» [9]:

«Ազդակը» հայ ժողովրդի ներկան ու ապագան չի կապում Խորհրդային Միության հետ և խստորեն քննադատում է նրանց, ովքեր ընդունում են մեկ կայսրության մասնիկ դառնալու գաղափարը [10]:

Անցյալի, պատմության հանդեպ վերաբերմունքի, ընկալման տարբերությունից ևս ծնվում է սփյուռքահայի հատվածային ինքնությունների և պարբերականներում դրանց արտացոլմանը նրբերանգներ հաղորդելու խնդիրը: Օրինակ՝ հնչակյան պարբերականում անտեսվում էր Առաջին հանրապետության դերը. «*Հոկտեմբերը մեզի տուաւ պետականութիւն*» [7], «*1918էն 1920 Հայաստան անսահման, ողբերգական չափերով ունէր թշուառութիւն, համաճարակ, սով, անիշխանութիւն, եւ ահաբեկչական բռնակալութիւն: Բայց չունէր տարրական «ազատութիւն»...*» [11]: Ռուսամետ դիրքորոշմանը համահունչ խեղաթյուրվում էին Սարդարապատի և պատմական այլ իրադարձությունները՝ հաղթանակի փառքը վերագրելով բոլշևիկյան բանակին, մյուս կողմից՝ ինքնապաշտպանական կռիվների հռչակը վերագրվում էր ՀՅԴ-ին՝ քողարկելով այդ կուսակցության առանձին գործիչների ապիկարությունները [12]:

Հայ մշակույթի, հայեցի կրթության, դաստիարակության սերման հարցում պարբերականներն ընդգծված անջատողականություն չէին ցուցաբերում: Մի կողմից ներկայացնում էին ազգային արժեքներն ու հայ մեծերին, մյուս կողմից՝ նպաստում այդ ժառանգության գիտակցության, ազգային հպարտության ձևավորմանը:

Ընդհանուր առմամբ, երեք թերթերում էլ միացյալ ազգի, հայրենիքի, հայի ինքնության գաղափարն է շրջանառվում: Պարզապես թերթերից երկուսն այդ միաց-

յալ հայրենիքի կենսագործումը տեսնում են խորհրդային վարչակարգի հաստատման, իսկ մյուսը՝ պայքարի միջոցով: Արդյունքում սփյուռքահայերի դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների երկփեղկվածությունը հանգեցնում է նաև Խորհրդային Հայաստան-հայրենիք տարանջատման:

Միջավայրի ներգործությունը, այլ մշակույթի հետ միջնորդավորված շփումը անխուսափելի կնիք են թողնում անհատի ինքնության վրա: Սփյուռքյան ինքնությունը ճկուն է, իրավիճակային, կարող է յուրաքանչյուր պահ դրսևորվել մեկ կամ մյուս կողմով:

Քաղաքական կուսակցությունների և համապատասխան կրթամշակութային կառույցների կազմակերպված գործունեությունը մի կողմից նպաստում էր հայեցի դաստիարակմանը, ազգային արմատների պահպանմանը, մյուս կողմից՝ ընդգծված տարածայնությունների պատճառով հանգեցնում համայնքի ներսում խմբավորում-ների ձևավորմանը: Գաղափարական այս տարասևեռումները կուսակցությունների պաշտոնաթերթերում վերածվում էին բանավեճերի, որոնց ակամայից ներգրավվում էին նաև ընթերցողները: Յուրաքանչյուրի լսարանի համար ընդունելի էր տվյալ թերթի դիրքորոշումը, ինչը, ի վերջո, ինքնության բազմաշերտ դրսևորումների առիթ դարձավ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Ջեփեան Պ. Լ.**, Հայ ինքնութիւն, «Ինքնության հարցեր» տարեգիրք, Երևան, 2002, էջ 42:
- [2] **Մարգարյան Մ.**, Ազգային մտահայեցողություն և ինքնակառավարում, «Ինքնության հարցեր» տարեգիրք, Երևան, 2002, էջ 58:
- [3] **Պըլտեան Գ.**, Ինքնութեան փորձառութիւնը Սփիւռքի մէջ, «Ինքնության հարցեր» տարեգիրք, Երևան, 2002, էջ 104:
- [4] **Hall S.**, Cultural Identity and Diaspora, Identity: Community, Culture and Difference. Jonathan Rutherford ed. London, 1990, Lawrence & Wishart, p. 225.
- [5] **Թոլոյան Խ.**, մաս 1, URL: <https://www.youtube.com/watch?v=xvZ74kGxA5w> (դասախոսության ձայնագրություն, հղումը կատարվել է՝ 16.05.2018):
- [6] **Սահակյան Վ.**, «Փոփոխվող սփյուռքները. հայեցակարգեր և մոտեցումներ» ամառային ծրագիր, Հայկական բարձրագույն կրթության նախաձեռնություն, ՀԱՀ, Երևան, հուլիսի 10-21, 2017:
- [7] **Վանիկ**, Հոկտեմբերեան Յեղափոխութեան Յիսնամեակին՝ Անտոն Քոչինեանի ճառին առթիւ, «Արարատ», թիվ 8, նոյեմբերի 24, 1967 թ.:
- [8] **Վանիկ**, Հին ժողովուրդի նոր վերելքը, «Արարատ», հուլիսի 8, թիվ 201, 1967 թ.:
- [9] **Արմէն Ազատ**, Հայաստանի եւ սփիւռքի հայութեան փոխարարբերութեան մասին, «Ազդակ», թիվ 117, հուլիսի 22, 1963 թ.:

[10] **Փափազեան Բ.**, Հ.Յ.Դ.ի 75ամեակին առիթով», «Ազդակ», թիվ 244, դեկտեմբերի 18, 1965 թ.:

[11] **Անդրէասեան Ա.**, Հայկական դատին նոր հանգրուանը, «Զարթոնք», թիվ 275, օգոստոսի 25, 1967 թ.:

[12] **Զաղեթեան Գ.**, Դաշնակցական շէֆերի Հայաստանէն փախցուցած գումարները եւ հաշուետուութիւնը, «Զարթոնք», թիվ 122, փետրվարի 20, 1968 թ., **Աղան Տարօնեցի**, «Պատասխանատուները Տարօնի եղեռնին», «Զարթոնք», թիվ 151, մարտի 26, 1968: **Թորգոմ Վեգիրեան**, Մի քանի փաստեր խմբապետ Սեպուհի ազգադաւ գործունէութիւնից, «Զարթոնք», թիվ 78, դեկտեմբերի 27, 1968:

Ավագյան Գայանե

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ 1960-ԱԿԱՆ ԹԹ.

Բանալի բառեր՝ մամուլ, ինքնություն, սփյուռք, Խորհրդային Հայաստան, Լիբանան, սփյուռքյան ինքնություն, «Ազդակ», «Զարթոնք», «Արարատ», կուսակցական պարբերականներ, հայ համայնք:

Հոդվածում ներկայացվում է ազգային ինքնության կողքին սփյուռքյան ինքնություն տարանջատելու անհրաժեշտությունը: 1960-ական թվականներին Լիբանանում տպագրվող հայկական պարբերականների («Արարատ», «Զարթոնք» ու «Ազդակ») ուսումնասիրությունը վերհանում է սփյուռքյան ինքնության հատվածայնության խնդիրը: Բացահայտվում են նաև մամուլի ջանքերը՝ երանգ հաղորդելու ինքնության մասին պատկերացումներին: Լիբանանի հայ համայնքի գաղափարական տարասևեռումները կուսակցությունների պաշտոնաթերթերում 1960-ականներին վերածվում էին բանավեճերի՝ ինքնության բազմաշերտ դրսևորումների առիթ դառնալով:

Авагян Гаянэ

ПРОЯВЛЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В АРМЯНСКОЙ ПРЕССЕ ЛИВАНА В 1960-Е ГОДЫ

Ключевые слова: пресса, идентичность, Диаспора, Советская Армения, Ливан, идентичность диаспоры, «Аздак», «Зартонк», «Арарат», партийные периодические издания, Армянская община.

В статье представлена необходимость выделения идентичности диаспоры наравне с национальной идентичностью. Исследование армянских газет Ливана 1960-х годов («Арарат», «Аздак», «Зартонк») показывает многослойность идентичности диаспоры. Также в статье выявляются попытки прессы придать особую окраску представлениям об идентичности. Идеологические различия, существующие в Армянской общине Ливана, в официальных газетах 1960-х годов превращались в дебаты, что в конечном итоге способствовало многоуровневому проявлению идентичности.

Avagyan Gayane

MANIFESTATIONS OF NATIONAL IDENTITY IN THE ARMENIAN PRESS OF LEBANON IN 1960S

Key words: press, identity, Diaspora, Soviet Armenia, Lebanon, Diaspora identity, 'Azdak', 'Zartonk', 'Ararat', party periodicals, Armenian community.

The article describes the necessity to distinguish Diaspora identity, apart from the national identity. The study of Armenian newspapers in Lebanon ('Azdak', 'Zartonk', 'Ararat') in 1960s reveals the issue of Diaspora identity fragmentation. Furthermore, it discloses the efforts of the press to attribute particular complexion to the conception of identity. Ideological polarizations, existing in the Armenian community of Lebanon, have been transformed into disputes in the official newspapers, causing multi-layer identity reflections.